

## ԿԱՐԳ

### «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են դպրոցական տարիքի երեխայի (այսուհետ՝ Սովորող) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տարրական, միջին և ավագ դպրոց (այսուհետ՝ Դպրոց) ընդունելության հետ կապված իրավահարաբերությունները:

#### II. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2. Սովորողը Դպրոց ընդունվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կանոնադրության պահանջներին համապատասխան՝ վճարովի հիմունքներով:

3. Սովորողի ընդունելությունը Դպրոց իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնող(ներ)ի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հիմնարկի ու Սովորողի ծնող(ներ)ի կամ նրա օրինական ներկայացուցչի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերի և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

3.1 Սովորողի ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է՝

- 1) Դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին,
- 2) Դպրոցի աշխատակիցների երեխաներին:

4. Սովորողին Դպրոց ընդունելիս կազմակերպվում է հարցազրույց առաջին դասարան ընդունելության դեպքում (առանց գիտելիքների ստուգման), իսկ երկրորդ և բարձր դասարան ընդունելության դեպքում՝ գիտելիքների գրավոր ստուգում: Հարցազրույցի կամ գիտելիքների ստուգման փուլը չհաղթահարած Սովորողը Դպրոց չի ընդունվում:

III. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ՏԵՂԱՓՈԽՄԱՆ) ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

5. Սովորողին Դպրոց ընդունելու համար ծնող(ներ)ը կամ նրա օրինական ներկայացուցիչ(ներ)ը ներկայացնում է փաստաթղթերի հետևյալ ցանկը.

- 1) Դիմում (հավելվածի Ձև)` ուղղված տնօրենին,
- 2) Բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում,
- 3) Երեխայի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը: Տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահպանվում է սովորողի անձնական գործում,
- 4) Ծննդյան վկայականի և անձնագրի բնօրինակը (առկայության դեպքում),
- 5) Սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի անձնագրի բնօրինակը՝ համապատասխան պայմանագիր կնքելու նպատակով: Տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի անձնագրի պատճենը պահպանվում է համապատասխան պայմանագրի հետ,
- 6) 2 լուսանկար՝ 3X4 չափսի,
- 7) Սովորողի «Անձնական գործ» գրքույկը (բացառությամբ առաջին դասարանի և ուսումնական տարվա սկզբում ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդունելության),
- 8) Տեղեկանք՝ ընթացիկ գնհատականների և բացակայությունների քանակի մասին, նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ նաև տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների մասին,
- 9) Սովորողի տեղափոխման թերթիկը՝ դպրոցից դպրոց տեղափոխվելիս (բացառությամբ ուսումնական տարվա սկզբում հիմնական դպրոցից ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդունելության): Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների մասին,
- 10) Հիմնական կրթության վկայականի բնօրինակը՝ 10-12-րդ դասարաններ ընդունելության դեպքում,
- 11) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն հրամանի հավելվածի 23-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից,
- 12) Սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի ցանկությամբ՝ այլ փաստաթղթեր:

6. Սովորողին Դպրոց ընդունելու մասին դիմումը և կից փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ սկանավորված տարբերակով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի [school@gaus.am](mailto:school@gaus.am) էլեկտրոնային փոստի հասցեին:

ՁեՎ

ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ  
«ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ»  
ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ Ա.Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

-----ից  
(Սովորողի ծնողի (ծնողների) կամ օրինական ներկայացուցչի անուն, հայրանուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ»  
ՀԻՄՆԱՐԿԻ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սովորողի անուն, հայրանուն, ազգանուն \_\_\_\_\_,
2. Ո՞ր դպրոցի և դասարանի համար եք դիմում \_\_\_\_\_ դպրոցի \_\_\_\_\_ դասարան,  
(տարրական, միջին, ավագ) (նշել դասարանը)
3. Սովորողի՝ դպրոց ընդունման ամսաթիվը. 20\_\_ թվականի \_\_\_\_\_ -ից,
4. Սովորողի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը՝ \_\_\_\_\_,
5. Հաշվառման հասցե՝ \_\_\_\_\_,
6. Փաստացի բնակության հասցե՝ \_\_\_\_\_,
7. Սովորողի սոցքարտի (ՀԾՀ) համարը (առկայության դեպքում) \_\_\_\_\_,
8. Սովորողի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցում սովորող կամ մանկապարտեզ հաճախող քույր(եր)ի և/կամ եղբայր(ներ)ի անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը, հայրանուն(ներ)ը,
9. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցի կրթական լրացուցիչ բաղադրիչի ո՞ր առարկայական դասընթացներին է հաճախելու սովորողը.  
Ֆիզիկական ուղղվածություն \_\_\_\_\_,  
(գրել անվանումը ցանկից)  
Մտավոր ուղղվածություն \_\_\_\_\_,  
(գրել անվանումը ցանկից)  
Հոգևոր ուղղվածություն \_\_\_\_\_,  
(գրել անվանումը ցանկից)

Ծանոթացել եմ (ենք) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցի կողմից առաջարկվող ընտրովի առարկաների ցանկին:

10. Սովորողի առողջական առանձնահատկությունները (տարբեր տեսակի ալերգիաներ, այդ թվում՝ սննդային, հավանական նոպաներ, հոգեբանական խնդիրներ, հիվանդություններ և այլն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպելիս և երեխաների սննդակարգը մշակելիս հաշվի առնելու համար):

---

---

---

11. Դիմումին կցվող փաստաթղթերի ցանկ՝

---

---

---

12. Ունե՞ք տրանսպորտային փոխադրման անհրաժեշտություն

Այո \_\_\_\_\_ Եթե այո, նշեք ուղղությունը (Երկկողմանի / դեպի դպրոց / հետադարձ)

Ոչ \_\_\_\_\_

13. Համաձայն եմ / Համաձայն չեմ (ընդգծել համապատասխան դիրքորոշումը), որ իմ երեխայի նկարները կամ տեսաձայնագրությունները հրապարակվեն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

14. Տեղեկություն ծնողների (օրինական ներկայացուցիչների) վերաբերյալ.

Հայրը՝

---

\_\_\_\_\_ ,  
Աշխատանքի վայրը, պաշտոնը՝ \_\_\_\_\_ ,  
Հեռախոսահամար՝ \_\_\_\_\_ , Էլ.փոստ՝ \_\_\_\_\_ ,  
Բնակության / հաշվառման հասցե՝ \_\_\_\_\_ ,

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

Մայրը՝

---

\_\_\_\_\_ ,  
Աշխատանքի վայրը, պաշտոնը՝ \_\_\_\_\_ ,  
Հեռախոսահամար՝ \_\_\_\_\_ , Էլ.փոստ՝ \_\_\_\_\_ ,  
Բնակության / հաշվառման հասցե՝ \_\_\_\_\_ ,

Ծանոթացել եմ (ենք) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի և դպրոցի սովորողի ծնողի միջև կնքվող պայմանագրի պայմաններին և դպրոցի գործունեությունը կանոնակարգող այլ փաստաթղթերին:

15. Դիմումի ներկայացման ամսաթիվ՝ \_\_\_\_\_ 2020թ.: